Հաստատված է
Շուշիի տեխնոլոգիական համալսարանի
գիտական խորհրդի 2025 թվականի
N 2-03/25/8 որոշմամբ:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Հ.Ա.Միքայելյան**

ՇՏՀ-ի ՄՄԿԾ-ի հետազոտական գործունեության ոլորտների որոշումը և պլանավորումը 2025-2027թթ. (միջնաժամկետ պլան) համար

ՇՏՀ ՄՄԿԾ-ի (այսուհետ՝ Քոլեջ) 2025-2026 ուսումնական տարվա (կարճաժամկետ պլան) համար հետազոտությունների գերակա ոլորտներ սահմանել.

1. հողագիտություն, ագրոքիմիա, բույսերի պաշտպանություն,
2. քաղաքաշինություն, ճարտարապետություն, դիզայն
3. ինժեներական էկոնոմիկա և կառավարում,
4. տեղեկատվական տեխնոլոգիաներ և կապ:

Քոլեջի հետազոտությունների գերակա ոլորտների համար 2025-2026 ուսումնական տարում պլանավորել և կատարել հետևյալ աշխատանքները.

1. Հողագիտություն, ագրոքիմիա, բույսերի պաշտպանություն.

1.1. անջրդի պայմաններում նվազագույն մշակման օղակների ազդեցությունը հողի ջրային ռեժիմի կարգավորման, բույսերի ցրտադիմացկունության վրա,

1.2. նոր մշակված պոլիմերահանքային նյութի մելիորատիվ արդյունավետության որոշումը հողի դաշտային խոնավունակության բարձրացման վրա,

1.3. պարարտացման ժամկետների ազդեցությունը մշակաբույսերի չորադիմացկունության բարձրացման վրա,

1.4. Հետազոտել փորձարկվող մշակաբույսերի հիվանդությունների և վնասատուների տարածվածությունը և դրանց դեմ պայքարի տեղեկատվական թերթիկներ մշակել

1.5 Առաջադեմ հեռազննման տեխնոլոգիաների (դրոններ) կիրառման փորձարկում գյուղատնտեսական տարածքներում՝ տվյալահեն մոնիթորինգի, մշակաբույսերի աճի վերլուծության, հողի խոնավության, հիվանդությունների ու վնասատուների վաղ հայտնաբերման և ագրոէկոլոգիական ցուցանիշների գնահատման նպատակով:

2. Քաղաքաշինություն, ճարտարապետություն, դիզայն

2.1. Ուսումնասիրել Արցախի պատմա-ճարտարապետական ժառանգությունը, զարգացման փուլերը, շինարարական տեխնիկան և արվեստը, գտնել նրանց տեղը հայկական ճարտարապետության մեջ,

2.2. Ուսումնասիրել, հետազոտել դաշտային դիտարկումների արդյունքների հիման վրա Հայաստանի գեոմորֆոլոգիան, կազմել քարտեզներ, որի արդյունքները իրենց կիրառությունը կգտնեն տնտեսության և քաղաքաշինության ոլորտներում լուրջ վնաս պատճառող երևույթների և պրոցեսների ուսումնասիրության հարցերում,

2.3. Ուսումնասիրել և փնտրել նախագծային մտքեր և ստեղծել ավարտուն էսքիզներ:

3. **Ինժեներական էկոնոմիկա և կառավարում**.

3.1. Տնտեսական ազատության վրա հիմնված կրթական բարեփոխումների ուղիների ուսումնասիրում,

3.2. Մասնակցել պարենային անվտանգության ապահովման ուղիների մշակմանը:

4. **Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կապ**

4.1. Ուսումնասիրել, հետազոտել անօդաչու թռչող սարքերի կառուցվածքը և կառավարումը

4.2. Տեղեկատվական տեխնոլոգիաներն օգտագործել դրանց աշխատանքի բարելավման, գյուղատնտեսության մեջ պարարտանյութերի և բույսերի պաշտպանության միջոցների օգտագործման համար այդ սարքերի կիրառման նպատակով (միջնաժամկետ ծրագրի մաս):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ն. Ա.Միքայելյան**

Գիտական քարտուղարի պաշտոնակատար՝ **Լ.Գ. Այդինյան**